«Արխիվացման ծառայությունների»

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՔԱԳՎ-ԲԸԱՀԾՁԲ-17/12

ք.Երևան «11» սեպտեմբեր 2017թ.

ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Մանուկյանի, որը գործում է վարչության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ն, ի դեմս տնօրեն Ա.Վիրաբյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների և սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի:

1.2. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պայմանագրով սահմանված պարտավորությունների լրիվ կատարումը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2. Առանց Ծառայության արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կատարողի կողմից մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին և (կամ) խախտել է Ծառայության մատուցման ժամկետը և Ծառայությունը չի կարող մատուցվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

2.1.3. Չընդունել Ծառայության արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին և տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2. կետով նախատեսված տուգանքը.

2.1.4. Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Կատարողին և հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5. կետով նախատեսված տույժը:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Մինչև Ծառայության արդյունքը Պատրվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու մատուցված Ծառայության համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.2. կետով նախատեսված դեպքի:

2.3.2. Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին:

2.3.3. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3. կետում նշված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 5.5. կետով նախատեսված տույժը:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2. Սույն պայմանագրի 2.1.2. կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.3. Սույն պայմանագրի 2.1.3. կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 5.2. կետով նախատեսված տուգանքը:

2.4.4. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 4):

3.2. Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 1 օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.3. Կատարողի մատուցած Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազում է 286350 (երկու հարյուր ութսունվեց հազար երեք հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն՝ նվազեցնելու այդ գինը:

4.2. Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է սույն պայմանագրի N 3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության որակի և սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2. Սույն պայմանագրի 2.1. կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման, 2.1.3. կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Ծառայությունը չընդունվելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1. կետում նախատեսված գումարի 0.05%-ի չափով:

5.3. Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05%-ի չափով, իսկ տույժերի հաշվարկումը իրականացվում է օրացույցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.4. Սույն պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում է Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3. կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա , սակայն չվճարված գումարի 0.05% -ի չափով:

5.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորություններն չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և

արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամիսց ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև գնման պայմանագրի կնքումը Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում << օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին << օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է << օրենսդրությամբ սահմանված կարգով փոխատուցել Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որ ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.2. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

Սույն պայմանագրից ծագած՝ Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձն, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3. Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, ,Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասինե << օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.4. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը: Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ << օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի Կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ

ա) Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

բ) եթե դա Պատվիրատուի գործողության կամ անգործության հետևաք չէ:

7.5. Եթե պայմանագրի գնի հիմնավորվածության և արժանահավատության փորձաքննության արդյունքում պայմանագրի գինը որակվում է շուկայական գնից 10% բարձր, և պայմանագրի Կողմը չի համաձայնում այդ չափով գնի նվազեցմանը, ապա Պատվիրատուն պայմանագիրը միակողմանիորեն լուծում է և չի կրում պայմանագրի լուծման հետևանքով առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը:

7.6. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերն լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատակա կարգով:

7.7. Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

7.8. Սույն պայմանագրով նախատեսված պայմանագրի կատարման ապահովումը վերադարձվում է կատարողին՝ պայմանագրի կատարման ավարտից 40 օրվա ընթացքում կամ կողմերի համաձայնությամբ՝ կատարմանը համամասնորեն:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԿԱ Քաղ. ավիացիայի գլխ. վարչություն ՊՀ	«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ
ք.Երևան, Զվարթնոց օդանավակայան	ք.Երևան, Հր.Քոչար 5/2
ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն	ՎՏԲ Հայաստան բանկ ՓԲԸ
Հ/Հ 900011207082	Հ/Հ 16048100944900
ՀԿՀՀ 01204231	ՀԿՀՀ 00078217
Աշխատակազմի ղեկավար	Տնօրեն
Ա. Մանուկյան	Ա.Կիրաբյան

Հավելված N 1
«11» դեկտեմբեր 2017թ. կնքված
N ՔԱԳՎ-ԲՐԱՀՇՁԲ-17/12 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Մշտական պահպանության գործերի արխիվացման ծառայությունների

Մշտական պահպանության գործերի առանձնացում և ձևավորում.

- պետության և հասարակության համար պատմամշակութային կամ գիտական արժեք ներկայացնող փաստաթղթերի ժամանակագրական կարգով դասակարգում գործերի շապիկների մեջ՝ այնուհետև թերթերի համարակալում, կարում և վավերացում սահմանված ձևով

- արդեն պատրաստի մշտական պահպանության արխիվային գործերի շապիկների նկարագրում և ցուցակագրում: Ցուցակի ձևը սահմանված է ՀՀ կառավարության 2005թ. հունիսի 23-ի N 932-Ն որոշմամբ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. մշտական պահպանության գործերի ցուցակը կազմվում է 4 օրինակից և քննարկվում ու հաստատվում Հայաստանի ազգային արխիվի մեթոդական փորձագիտական հանձնաժողովում:

Անձնակազմին վերաբերող գործերի արխիվացման ծառայությունների

Անձնակազմին վերաբերող գործերի առանձնացում և ձևավորում (պահպանության ժամերը 25-ից 50 տարի՝ սկսած փաստաթղթերի ստեղծման հաջորդ տարվա հունվարի 1-ից)

- Գործատուի հետ քաղաքացիների աշխատանքային հարաբերությունների ընթացքում աշխատանքային ստաժի, աշխատավարձի չափի և աշխատանքային գործունեության մասին տեղեկություններ պարունակող արխիվային փաստաթղթերի ժամանակագրական կարգով դասակարգում գործերի շապիկների մեջ՝ այնուհետև թերթերի համարակալում, կարում և վավերացում սահմանված ձևով.

- արդեն պատրաստի անձնակազմին վերաբերող գործերի շապիկների նկարագրում և ցուցակագրում: Ցուցակի ձևը սահմանված է ՀՀ կառավարության 2005թ. հունիսի 23-ի N 932-Ն որոշմամբ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. անձնակազմին վերաբերող գործերի ցուցակը կազմվում է 3 օրինակից և քննարկվում ու հավանության արժանանում Հայաստանի ազգային արխիվի մեթոդական փորձագիտական հանձնաժողովում:

Պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի արխիվացման ծառայությունների

Պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի առանձնացում և ոչնչացման ակտի կազմում (պահպանության ժամկետը՝ 1-ից 10 տարի՝ սկսած փաստաթղթի ստեղծման հաջորդ տարվա հունվարի 1-ից).

- Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմի մեջ չմտնող և ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում պահպանվող (փաստաթղթերի պահպանության ժամկետները սահմանված են ՀՀ կառավարության 2006թ. մարտի 9-ի N 351-Ն որոշմամբ) փաստաթղթերի ըստ տեսակների և տարիների խմբավորում, կապոցավորում և սահմանված ձևի ակտի կազմում: Ակտի ձևը սահմանված է ՀՀ կառավարության 2005թ. հունիսի 23-ի N 932-Ն որոշմամբ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԿԱ Քաղ. ավիացիայի գլխ. վարչություն ՊՀ	«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ
ք.Երևան, Զվարթնոց օդանավակայան	ք.Երևան, Հր.Քոչար 5/2
ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն	ՎՏԲ Հայաստան բանկ ՓԲԸ
Հ/Հ 900011207082	Հ/Հ 16048100944900
ՀՎՀՀ 01204231	ՀՎՀՀ 00078217
Աշխատակազմի ղեկավար	Տնօրեն
Ա. Մանուկյան	Ա.Պիրումյան

Հավելված N 2
«11» մարտի 2017թ. կնքված
N ՔԱԳՎ-ԲՐԱՀՇՁԲ-17/12 գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	Գնման ծառայության անվանումը			Նախատեսվում է գնել 2017թ.								Ընդամենը	
	Անվանում	Չափի միավորը	Միավորի նախահաշվային գինը	1-ին եռամսյակ		2-րդ եռամսյակ		3-րդ եռամսյակ		4-րդ եռամսյակ		Մանակ	Գին
				քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
1	Մշտական պահպանության գործերի արխիվացում	գործ	900					150	135000			150	135000
2.	Անձնակազմի վերաբերյալ գործերի արխիվացում	գործ	450					3	1350			3	1350
3	Պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի արխիվացում	գործ	300					500	150000			500	150000
									286350				286350

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԿԱ Քաղ. ավիացիայի գլխ. վարչություն ՊՀ
ք.Երևան, Զվարթնոց օդանավակայան
ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն
Հ/Հ 900011207082
ՀՎՀՀ 01204231
Աշխատակազմի ղեկավար
Ա. Մանուկյան

ԿԱՏԱՐՈՂ
«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ
ք.Երևան, Հր.Քոչար 5/2
ՎՏԲ Հայաստան բանկ ՓԲԸ
Հ/Հ 16048100944900
ՀՎՀՀ 00078217
Տնօրեն
Ա.Կիրսարյան

Հավելված N 3
«11» մայիսի 2017թ. կնքված
N ՔԱԳՎ-ԲՀԱՀԾՁԲ-17/12 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Արխիվացման ծառայություններ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	286350	286350	286350	**286350**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԿԱ Քաղ. ավիացիայի գլխ. վարչություն ՊՀ
ք.Երևան, Զվարթնոց օդանավակայան
ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն
Հ/Հ 900011207082
ՀՎՀՀ 01204231
Աշխատակազմի ղեկավար
Ա. Մանուկյան

ԿԱՏԱՐՈՂ
«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ
ք.Երևան, Հր.Քոչար 5/2
ՎՏԲ Հայաստան բանկ ՓԲԸ
Հ/Հ 16048100944900
ՀՎՀՀ 00078217
Տնօրեն
Ա.Վիրաբյան

Հավելված 4
«----» ---------- 2017թ. կնքված
N ՔԱԳՎ-ԲՀԱՀԾՁԲ-17/12 գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2017թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ ,____ե ,_____ե 2017թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս
_____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ ,____ե ,_____ե 2017թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	Ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն

Կ.Տ. Կ.Տ.

Հավելված 4.1
«----» ---------- 2017թ. կնքված
N ՔԱԳՎ-ԲԸԱՀԾՁԲ-17/12 գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2017թ. ------- -ին կնքված N ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 2017թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

Ստորագրություն